ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՐՈՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ОБЩИНА СЕЛА ХОРОНК
АРМАВИРСКОЙ ОБЛАСТИ

<< Արմավիրի մարզ, գ. Խորոնք
Հեռ. /10374- 099/03-08-08/0231/6-86-89/

С. Хоронк Армавирской обл. РА
Тел. /10374- 099/03-08-08/0231/6-86-89/

N 89 04 07 2016г

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ
Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ղեկավարի՝ 2016 թվականի հունիս ամսվա ընթացքում ընդունած որոշումները: Կարգադրություններ չեն արձակվել:

Առդիր՝ 20 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Խորոնք, 68689, khoronq.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2016 թվականի N 30

ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 31-ի թիվ 7 նիստի թիվ 1 որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքի վարչական սահմաններում գտնվող բնակելի տունը / կոդ՝ 04-050-016-016 / հասցեավորել Վ.Վարդանյան 54 :

2.Սույն որոշումը պետական գրանցման համար ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ապասարկման գրասենյակ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

20 16 թ. _հունիսի 20_
գ.Խորոնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Խորոնք, 68689, khoronq.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒՆԻՍԻ 2016 թվականի N29

ԱՐԱՄ ԳԱԳԻԿԻ ԹՈՆԳՈՒՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 34-րդ, 36-րդ հոդվածներով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N164-Ն որոշման 1-ին կետի հաստատված կարգի 6-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի բնակչության Սրբուհի Հայկի Թոնգուրյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Համայնքի անչափահաս բնակիչ Արամ Գագիկի Թոնգուրյանի /ծնվ. 24.10.2001թ./ նկատմամբ սահմանել հոգաբարձություն՝ հոգաբարձու նշանակելով Սրբուհի Հայկի Թոնգուրյանին /ծնվ. 01.01.1954 թ./:

2.Հսկողություն սահմանել Արամ Գագիկի Թոնգուրյանի նկատմամբ նշանակված հոգաբարձու Սրբուհի Հայկի Թոնգուրյանի գործունեության նկատմամբ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / Ս. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ /

20 16 թ. _հունիսի 13_ ____
գ.Խորոնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Խորոնք, 68689, khoronq.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունիսի 2016 թվականի N 28

ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 31-ի թիվ 7 նիստի թիվ 1 որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքի վարչական սահմաններում գտնվող բնակելի տունը / կոդ՝ 04-050-058-014 / հասցեավորել Հ.Ծիրազի 50 :

2.Սույն որոշումը պետական գրանցման համար ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ապպարակման գրասենյակ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

20 16 թ. _հունիսի 10_
գ.Խորոնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Խորոնք, 68689, khoronq.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հունիսի 2016 թվականի N 27 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Հանրային ծառայության մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով,«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի30-րդ հոդվածի 2-րդ մասով,«Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների էթիկայի հանձնաժողովի ձևավորմանև գործունեության կարգն ու գործառույթները՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների էթիկայի հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելված 2 -ի :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / Ս.ՆԱՀԱՊԵՏՅԱՆ/

2016 թ. հունիսի 07
գ.Խորոնք

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Խորոնք
գյուղական համայնքի ղեկավարի
2016 թվականի հունիսի 07 ի
N 27-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների էթիկայի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) ձևավորման և գործունեության կարգը ու գործառույթները:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքներով, սույն կարգով, Խորոնք համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և այլ իրավական ակտերով:

3. Հանձնաժողովը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայող համարվող առնվազն 5 անդամից: Հանձնաժողովը ձևավորում և դրա անդամներին նշանակում է Խորոնք համայնքի ղեկավարը:

4. Հանձնաժողովի որոշումները հիմք են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողի նկատմամբ «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կարգապահական տույժ նշանակելու գործընթաց սկսելու համար:

5. Հանձնաժողովի գործունեության մասին տվյալները տեղադրվում են համայնքի համացանցային կայքում՝ www.khorong.am:

6. Հանձնաժողովի աշխատանքների նյութատեխնիկական և կազմակերպչական օժանդակությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնքի համայնքապետարանի աշխատակազմը:

ԳԼՈՒԽ 2
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Հանձնաժողովի հիմնական խնդիրն է նպաստել Խորոնքի համայնքապետարանում էթիկայի կանոնների պահպանմանը:

8. Հանձնաժողովի նպատակն է ապահովել համայնքային ծառայողի պատշաճ վարքագիծը, բացառել հանրային և մասնավոր շահերի բախումը, ամրապնդել հասարակության վստահությունը:

9. Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակում՝

1) քննության է առնում իրեն ուղղված հարցերը.

2) քննարկվող հարցերի վերաբերյալ ընդունում է որոշումներ կամ տալիս եզրակացություններ.

3) իր գործունեության վերաբերյալ յուրաքանչյուր տարի գրավոր հաշվետվություն է ներկայացնում համայնքի ղեկավարին.

4) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

ԳԼՈՒԽ 2
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ՝ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

10. Հանձնաժողովի քննարկմանը կարող են ներկայացվել Խորոնքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների էթիկայի կանոնների խախտման, դրանց պահպանման, պահպանմանը խոչընդոտելու վերաբերյալ հարցեր:

11. Սույն կարգի 10-րդ կետով նախատեսված հարցերը չպետք է առնչվեն քրեական կամ վարչական պատասխանատվություն առաջացնող հարցերին:

12. Հանձնաժողովի քննարկմանը հարցեր իրավասու են ներկայացնել՝

1) համայնքի ղեկավարը,

2) համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողները,

3) ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք,

4) պետական լիազոր մարմինը:

13. Հանձնաժողովի քննարկմանը հարցերը ներկայացվում են գրավոր՝ համապատասխան հիմնավորումներով:

14. Հանձնաժողովը հարցերը քննարկում է դրանք ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում: Անհրաժեշտության դեպքում՝ Հանձնաժողովը հարցի քննարկումը՝ Հանձնաժողովի նախագահի որոշմամբ կարող է երկարաձգել, բայց ոչ ավելի, քան 7 աշխատանքային օրով:

15. Խորոնքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողները կարող են դիմել Հանձնաժողովին՝ պարզաբանումներ ստանալու էթիկայի կանոնների պահպանման վերաբերյալ: Հանձնաժողովը այդ դիմումներին պատասխանում է սույն կարգի 14-րդ կետում նշված ժամկետում:

16. Եթե Հանձնաժողովը սահմանված ժամկետում չի տալիս համապատասխան եզրակացություն կամ պարզաբանում, ապա համայնքի ղեկավարը այն կարող է լուծարել և մեկամսյա ժամկետում ձևավորել նոր Հանձնաժողով, որն իր աշխատանքը սկսում է անպատասխան դիմումի քննարկումից: Այդ դեպքում սույն կարգի 14-րդ կետով սահմանված ժամկետները վերսկսվում են նոր Հանձնաժողովը ձևավորելու պահից:

17. Հանձնաժողովի նիստերին մասնակցելու են հրավիրվում հարցը ներկայացրած անձը և այն անձը, ում հետ կապված է ներկայացված հարցի բնույթը:

18. Հանձնաժողովը հարցերի քննարկմանը կարող է ներգրավվել նաև շահագրգիռ անձանց, մասնագետների և այլոց:

19. Հանձնաժողովի նիստին սույն կարգի 17-րդ և 18-րդ կետերում նշված անձանց չներկայանալը արգելք չէ Հանձնաժողովի կողմից տվյալ հարցի քննության և համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունման համար:

ԳԼՈՒԽ 3
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

20. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

21. Հանձնաժողովի նիստերը գումարվում են համապատասխան դիմումի հիման վրա:

22. Հանձնաժողովը երեք աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնում է դիմումը, եթե այն ներկայացվել է սույն կարգով կամ այլ իրավական ակտերով չնախատեսված հարցերի վերաբերյալ:

23. Հանձնաժողովի նիստերը իրավազոր են՝ Հանձնաժողովի առնվազն կեսից ավելի անդամների մասնակցության դեպքում:

24. Հանձնաժողովի նախագահը դիմումը ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում առաջարկում է այն անձին՝ ում վերաբերյալ դիմում է ներկայացվել էթիկայի կանոնների խախտումների վերաբերյալ՝ տալ համապատասխան բացատրություններ և պարզաբանումներ:

25. Հանձնաժողովը դիմում ներկայացրած անձին կարող է առաջարկել ներկայացնել անհրաժեշտ բացատրություններ, փաստաթղթեր և այլ հիմքեր, որոնք հնարավորություն կտան պարզել էթիկայի կանոնների խախտման առկայությունը կամ բացակայությունը:

26. Սույն կարգի 25-րդ կետում նշված փաստաթղթերը կամ պարզաբանումները չներկայացնելը կարող է Հանձնաժողովի կողմից մեկնաբանվել, որպես էթիկայի կանոնների խախտման բացակայություն:

27. Հանձնաժողովի կազմից համայնքի ղեկավարը նշանակում է Հանձնաժողովի նախագահ և քարտուղար:

28. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է Հանձնաժողովի աշխատանքները,

2) վարում է հանձնաժողովի նիստերը,

3) հաստատում է Հանձնաժողովի նիստի օրակարգը, որոշում նիստի անցկացման ժամանակը և վայրը,

4) որոշում է Հանձնաժողով ներկայացրած հարցերի քննարկման հերթականությունը,

5) ստորագրում է Հանձնաժողովի անունից կազմվող գրությունները,

6) Հանձնաժողովի անդամների միջև կատարում է աշխատանքի բաշխում,

7) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

29. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ապահովում է Հանձնաժողովի աշխատանքների, նիստերի, օրակարգերի, անհրաժեշտ այլ նյութերի, ինչպես նաև եզրակացությունների և որոշումների նախագծերի պատրաստումը,

2) Հանձնաժողովի անդամներին, այն անձին, ում ներկայացմամբ քննարկվում է հարցը և ում հետ կապված է հարցի քննությունը, նիստից երկու աշխատանքային օր առաջ տեղեկացնում է Հանձնաժողովի նիստի օրակարգի, ժամանակի և վայրի մասին,

3) արձանագրում է Հանձնաժողովի նիստերը և ստորագրում արձանագրությունները,

4) կատարում է Հանձնաժողովի նախագահի հանձնարարականները,

5) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

30. Հանձնաժողովի անդամը՝

1) Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում՝ նրա հանձնարարությամբ կատարում է վերջինիս լիազորությունները,

2) մասնակցում է Հանձնաժողովի նիստերին,

3) առաջարկություն է ներկայացնում Հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ,

4) ստորագրում է Հանձնաժողովի ընդունած որոշումները և եզրակացությունները,

5) կատարում է Հանձնաժողովի նախագահի հանձնարարականները,

6) իրականացնում է սույն կարգով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

31. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցվում են համայնքի ղեկավարի որոշմամբ՝

1) անձնական դիմումի հիման վրա,

2) առնվազն երեք անգամ Հանձնաժողովի նիստերին անհարգելի բացակայելու դեպքում,

3) էթիկայի կանոնները խախտելու դեպքում,

4) սույն կարգով նախատեսված պահանջները խախտելու դեպքում,

5) համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայող այլևս չհանդիսանալու դեպքում:

ԳԼՈՒԽ 4
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

32. Հանձնաժողովը ընդունում է որոշում Էթիկայի կանոնների խախտման կամ բացակայության մասին:

33. Էթիկայի կանոնների պահպանման մասով համայնքային ծառայողի կողմից անհրաժեշտ վարքագիծ դրսևորելու համար Հանձնաժողովը սրամադրում է եզրակացություններ:

34. Հանձնաժողովի որոշումները և եզրակացությունները ստորագրվում են Հանձնաժողովի նիստին ներկա բոլոր անդամների կողմից:

35. Հանձնաժողովի եզրակացությունները և որոշումները ընդունվում են քվեարկությամբ՝ Հանձաժողովի նիստին մասնակցած Հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ: Քվեարկությանը մասնակցում եմ Հանձնաժողովի բոլոր ներկա անդամները՝ քվեարկելով կողմ կամ դեմ:

36. Հանձնաժողովի որոշումները, դրանք ընդունվելուց հետո, հաջորդ աշխատանքային օրը տրամադրվում են այն անձին, ում ներկայացմամբ քննարկվել է հարցը և ում հետ կապված է հարցի քննությունը, ինչպես նաև տվյալ համայնքային ծառայողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին:

37. Հանձնաժողովի որոշման մեջ կարող է խորհրդակցական կարգով առաջարկվել, թե ինչ կարգապահական տույժ նշանակվի տվյալ անձի նկատմամբ:

38. Հանձնաժողովի եզրակացությունները պարտադիր են համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների համար:

39. Հանձնաժողովի եզրակացությունների հասանելիությունը համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներին՝ ապահովում է Խորոնքի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

Աշխատակազմի քարտուղար՝ Ա.Մինասյան

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի խորհուրդ
գյուղական համայնքի ղեկավարի
2016 թվականի հունիսի 07-ի
N 27-Ա որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ալվարդ Մինասյան	համայնքապետարանի աշխատակազմի բարտուղար (հանձնաժողովի նախագահ)
Վարդանուշ Կարապետյան	համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (հանձնաժողովի բարտուղար)
Հովասափ Խաչատրյան	համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ (հանձնաժողովի անդամ)
Աննա Գրիգորյան	համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ (հանձնաժողովի անդամ)
Սարգիս Խաչատրյան	համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ (հանձնաժողովի անդամ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Խորոնք, 68689, khoronq.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 հունիսի 2016 թվականի N 26-Ա

ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարհանման կարգ հաստատելու մասին» թիվ 1180-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետի պահանջներով <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետով 1) ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզպետի 02.07.2013թ-ի N 285 որոշման 4-րդ կետը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Խորոնք համայնքի բնակչության տարհանման հանձնաժողովի կազմում կատարել հետևյալ փոփոխությունները՝ (համաձայն հավելվածներ՝ N 1-ի, N2 -ի) .

- Սամվել Կարապետյանի փոխարեն՝ Ալվարդ Մինասյան,

- Ջեմֆիրա Քերոբյանի փոխարեն՝ Վարդանուշ Կարապետյան ,

- Խորոնքի ԲԱՊՓԲԸ -ի փոխարեն՝ Խորոնքի ԲԱ ՀՈԱԿ ;

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ / Ս.ՆԱՀԱՊԵՏՅԱՆ/

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀՀ Արմավիրի մարզի Խորոնք
համայնքի ղեկավարի 2016 թվականի
հունիսի 06-ի թիվ 26-Ա որոշման

Խորոնք համայնքի բնակչության պարտադիր հանձնաժողովի կազմը.

Գրիշա Աստվածյան - Հանձնաժողովի նախագահ՝

/համայնքի ղեկավարի տեղակալ/

Հովսեփի Խաչատրյան - Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝

/աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ/

Ալվարդ Մինասյան - Հանձնաժողովի քարտուղար՝

/ աշխատակազմի քարտուղար /

Հանձնաժողովի անդամներ,աշխատանքային խմբերի ղեկավարներ՝

Վարդանուշ Կարապետյան - գյուղապետարանի առաջատար մասնագետ /հաշվապահ/

Արամայիս Շահբազյան- դպրոցի տնօրեն

Վազգեն Նաջարյան - գյուղապետարանի վարորդ

Մարինե Ջիվանյան- Խորոնքի ԲԱ ՀՈԱԿ տնօրեն :

Աշխատակազմի քարտուղար՝

ՀԱՎԵԼՎԱԾ .
ՀՀ Արմավիրի մարզի Խորոնք
համայնքի ղեկավարի 2016 թվականի
հունիսի 06-ի թիվ 26-Ա որոշման

Խորոնք համայնքի բնակչության զարգացման հանձնաժողովի աշխատանքային խմբերը՝

1.Վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խումբ.

Խմբի ղեկավար՝

Վարդանուշ Կարապետյան- գյուղապետարանի հաշվապահ

Խմբի անդամներ՝

Լարիսա Ավաքյան – մշակույթի տան տնօրեն

Արշալույս Մայիլյան – գրադարանի վարիչ

2.Անվտանգ գոտում բնակչության տեղաբաշխման հաշվառման խումբ.

Խմբի ղեկավար՝

Արամայիս Շահբազյան- դպրոցի ուսմասվար

Խմբի անդամներ՝

Արթուր Մամիկոնյան – ավագանու անդամ

Սոնիկ Սողոմոնյան – դպրոցի կազմակերպիչ

3. Տրանսպորտային ապահովման խումբ՝

Խմբի ղեկավար՝

Վազգեն Նաջարյան –գյուղապետարանի վարորդ

Խմբի անդամներ՝

Սարգիս Խաչատրյան –աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ

Սամվել Մանանքերիձյան – համայնքի բնակիչ

4.Մնդամթերքի և նյութական արժեքների պաշարների հաշվառման խումբ.

Խմբի ղեկավար՝

Մարինե Ջիվանյան – Խորոնք ԲԱ ՀՈԱԿ տնօրեն ,

Խմբի անդամներ՝

Նորիկ Կարապետյան – ավագնու անդամ

Էդգար Խաչատրյան – ավագանու անդամ

Աշխատակազմի քարտուղար՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորոնք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Խորոնք, 68689, khoronq.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 հունիսի 2016 թվականի N 25-Ա

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐՀԱՆՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարհանման կարգը հաստատելու մասին» թիվ 1180-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզպետի 02.07.2013թ-ի N 285 որոշման 4-րդ կետը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքի բնակչության տարհանման պլանը՝ (համաձայն հավելվածի):

2. Խորոնք համայնքի բնակչության տարհանման հանձնաժողովի նախագահին.

1) Յուրաքանչյուր տարի կազմակերպել համայնքի բնակչության տարհանման պլանի ճշգրտում՝ հունվարի 1-ի դրությամբ:
2) Մշտական հսկողություն իրականացնել համայնքում ստեղծված տարհանման մարմիններում անհրաժեշտ փաստաթղթերի առկայության և անձնակազմերի համալրվածության ուղղությամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

2016 թ. հունիսի 06__
գ.Խորոնք

Հավելված

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Խորոնք համայնքի
ղեկավարի 2016 թվականի հունիսի 06-ի
թիվ 25-Ա որոշման

ՊԼԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐՀԱՆՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Ռազմական դրության ժամանակ և ստեղծված արտակարգ իրավիճակներում համայնքի բնակչության տարահանումը պլանավորվում է համաձայն << կառավարության 18.09.2011թ-ի <Վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման կարգը սահմանելու մասին> թիվ 1180-Ն որոշման դրույթների:

Խորոնք համայնքի բնակչության տարահանում նախատեսվում է հետևյալ իրավիճակների առաջացման դեպքերում՝

- ռազմական դրության ժամանակ,
- Ապարանի ջրամբարի պատվարի փլուզման ժամանակ,
- ՀԱԷԿ-ի վթարի դեպքում ,
- ուժեղ երկրաշարժի առաջացման դեպքում:

II. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐՀԱՆՈՒՄԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

1. ***Բնակչության ազդարարման կարգը տարահանում սկսելու մասին***

1.1 Տարհանման մասին որոշում ընդունում են՝

1) Տարերային, տեխնածին կամ էկոլոգիական աղետների և այլ բնույթի վթարների դեպքում ընդհանուր կամ մասնակի տարահանման մասին որոշում ընդունում են՝

ա. Հայաստանի Հանրապետության մարզպետները՝ մարզի բնակչության համար,

բ.տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները՝ համայնքի բնակչության համար,

գ. կազմակերպությունների ղեկավարները՝ իրենց աշխատողների համար:

Նրանց բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց փոխարինող անձինք:

2) Համայնքի տարահանման հանձնաժողովի և մարզային տարահանման հանձնաժողովի միջև կապը կազմակերպվում է հեռախոսակապի միջոցով, միաժամանակ նաև ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի օպերատիվ հերթապահության միջոցով:

1.2 Բնակչության ազդարարումն համայնքում իրականացնում են՝

1) Ռազմական դրության ժամանակ տարահանում սկսելու վերաբերյալ բնակչության ազդարարման ազդանշանները տրվում են կապի և ազդարարման բոլոր միջոցներով՝ շարժական բարձրախոսային սարքերի օգնությամբ, միացվում են էլեկտրաշչակները, և տրվում է անընդհատ, երկարատև (3 րոպե տևողությամբ) ձայնային ազդանշան: Միաժամանակ ազդարարման միջոցներով՝ 2-3 րոպե տևողությամբ տրվում է հետևյալ բովանդակության համապատասխան տեքստային հաղորդագրություն. «ՈՒշադրություն, ուշադրություն. . .»: Անհրաժեշտության դեպքում հաղորդագրությունը լրացվում է «Վտանգ է սպառնում հետևյալ բնակավայրերին՝ .... » բառերով: Էլ.շչակների բացակայության դեպքում ազդարարումն իրականացվում է ձեռքի բարձրախոսներով, ոստիկանության շարժական պարեկային խմբերի միջոցով, տրանսպորտային և այլ միջոցներով, ինչպես նաև գյուղապետարանի աշխատակիցների և տարահանման մարմինների անձնակազմերի կողմից:

2) Տարահանումն սկսելու մասին համայնքների ղեկավարների ազդարարումն իրականացվում է մարզային փրկարարական վարչության դիսպետչերական կետից՝ մարզպետի կամ մարզային փրկարարական վարչության պետի կարգադրությամբ:

3) Կազմակերպությունների ղեկավարների ազդարարումն իրականացվում է համայնքային տարահանման հանձնաժողովների կողմից:

4) Հանրապետական, մարզային ռադիոյի և հեռուստատեսության, ոստիկանության բարձրախոսներով տեղեկացվում է բնակչության գործելու կարգի մասին:

2. Տարահանմանն ենթակա բնակչության թիվը

1) Ռազմական դրության ժամանակ նախատեսվում է համայնքի բնակչության մասնակի տարահանում, տարահանվում են **2496** բնակիչներ:

2) ՀԱԷԿ-ի վթարի դեպքում տարհանվում են՝ **2937** բնակիչներ :

3) Ապարանի ջրամբարի պատվարի փլուզման ժամանակ տարհանվում է՝ **2937** բնակիչ:

4) ՈՒժեղ երկրաշարժի դեպքում բնակչության տարահանումը կիրականացվի ստեղծված օպերատիվ իրավիճակին համապատասխան՝ ՀՀ Արմավիրի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովի կողմից կայացված որոշման համաձայն:

3. Տարհանվողների տեղաբաշխման վայրերը

1) Ռազմական դրության ժամանակ համայնքի բնակչությունը տարահանվում է՝ ք.Էջմիածին:

2) Ապարանի ջրամբարի պատվարի փլուզման ժամանակ բնակչությունը տարահանվում է՝ ք.Էջմիածին:

3) ՀԱԷԿ-ի վթարի դեպքում բնակչությունը տարահանվում է՝ գ. Գայ :

4) ՈՒժեղ երկրաշարժի դեպքում բնակչության տեղաբաշխումը կիրականացվի ստեղծված օպերատիվ իրավիճակին համապատասխան՝ ՀՀ Արմավիրի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովի կողմից կայացված որոշման համաձայն:

4. Տարհանման միջոցառումների իրականացման ժամկետները

4.1 Բնակչությունը տարհանման ազդանշան (հրահանգ) ստանալու դեպքում ժամանում է տարահանման հավաքակայան:

Մարտական պատրաստականության աստիճանների բերման ժամանակ տարահանման հավաքակայանների նախապատրաստումն իրականացվում է 6 ժամում, տարահանման որոշում կայացնելուց հետո հավաքակայանների ծավալումն իրականացվում է 2 ժամում, բնակչության ժամանումն հավաքակայաններ սկսվում է 2 ժամից՝ բնակչությանը տարահանման մասին ազդարարելու պահից:

Տարհանման հավաքակայաններից բնակչությունը տեղափոխվում է շարասյուներով: Շարասյուները լինում են հետիոտն և տրանսպորտային:

4.2 Ապարանի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում բնակչության տարհանումը հնարավոր ջրածածկման գոտիներից դեպի անվտանգ տարածքներ իրականացվում է անհապաղ: Անօթևան մնացած բնակչության հաշվառումը տարահանման հավաքակայաններում և տեղաբաշխումը կատարվում է մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում:

4.3 ՈՒժեղ երկրաշարժի դեպքում, ելնելով ստեղծված իրավիճակից, բնակչության տարահանման վերաբերյալ որոշումն ընդունվում և ժամկետները սահմանում է մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովը:

5. Տարահանվողների տեղափոխումը (դուրս բերումը) տրանսպորտով ԱԻ գոտուց

Ռազմական դրության ժամանակ համայնքի բնակչությունը տարահանումը կազմակերպվում է համայնքում առկա ___649____միավոր սարքին տրանսպորտային միջոցներով, որից ավտոբուս __6_ միավոր, միկրոավտոբուս __0__ միավոր, թեթև մարդատար ___594___ միավոր, բեռնատար __49___ միավոր:

6. Հասարակական կարգի կազմակերպման ապահովումը տարհանման

երթուղիներում

Ռազմական դրության ժամանակ տարահանման երթուղիներում հասարակական կարգի ապահովումը իրականացվում է << Ոստիկանության Արմավիրի ոստիկանության մարզային վարչության և ռազմական ոստիկանության ստորաբաժանումների ուժերով:

7. Տարհանվողների պաշտպանության կազմակերպումը հավաքման կետերում և

տարհանման երթուղիներում

7.1 Տարհանման հավաքակետերում տարահանվողների պաշտպանության նպատակով, հավաքակայանների վարչակազմերում ստեղծված են մոր և մանկան սենյակներ, բժշկական կետեր և հասարակական կարգի պահպանման խմբեր: Այս անձնակազմերն հավաքակայաններում ապահովում են պարենային ծառայությունը, հասարակական կարգի պահպանումը, կերակրող մայրերի և երեխաների ընդունումը, տեղավորումը և նրանց խնամքը, հիվանդների ամբուլատոր բուժ.օգնություն ցուցաբերումը, տարահանվող բնակչության շրջանում ի հայտ եկած վարակիչ հիվանդություններ ունեցող մարդկանց մեկուսացումը, շտապ կանխարգելիչ միջոցների ձեռնարկումը՝ այդ թվում վահանաձև գեղձի արգելափակումը և այլն:

7.2 Տարհանման երթուղիներում << ոստիկանության ուժերով և << առողջապահության նախարարության տարածքային ծառայությունների ուժերով իրականացվում է հասարակական կարգի ապահովում և տարահանվողների բժշկական ապահովում:

8. Տարհանման միջոցառումների կառավարման կարգը

Տարահանման միջոցառումների կառավարումն իրականացվում է ներքևից - վերև սկզբունքով: Կազմակերպությունների տարահանման հանձնաժողովները անձնակազմի տարահանման ընթացքի մասին զեկուցում են համայնքային տարահանման հանձնաժողովներին, համայնքային տարահանման հանձնաժողովները զեկուցում են մարզային տարահանման հանձնաժողովին:

9. Տեղեկատվության կազմակերպումը և բնակչության իրահանգավորումը

տարահանման ընթացքում:

Տարհանման վերաբերյալ բնակչության հրահանգավորումը նախօրոք իրականացվում է համայնքային և կազմակերպությունների տարահանման հանձնաժողովների կողմից:

Տարհանման ընթացքում բնակչության հրահանգավորումն իրականացվում է տարահանման հավաքակայանների և ավտոշարասյուների ղեկավարների կողմից:

Բնակչության տեղաբաշխման վերաբերյալ տեղեկատվությունը իրավասու մարմիններին և ազգաբնակչությանը տրվում է ինչպես բոլոր մակարդակների տարահանման հանձնաժողովների, այնպես էլ տարհանման-ընդունման հավաքակայանների, տեղեկատու սեղանների պատասխանատուների կողմից:

Ռազմական դրության ժամանակ տարհանման պլանի տեքստային մասում նշվում է

1. Բնակչության ազդարարման և հրահանգավորման կարգը տարահանում սկսելու մասին

2. Տարհանման ենթակա բնակչության թիվը

3. Տարհանման հավաքակայանը, որին ամրագրված են բնակչությունը կամ կազմակերպության աշխատողները (անձնակազմը), հավաքակայանի ծավալման և բնակչության ժամանման ժամկետները

4. Տարհանվող (տեղափոխվող) սարքավորումների, գույքի և փաստաթղթերի պահպանման կարգը ու մնացած նյութական արժեքների պահպանությունը

5. Տարհանման երթուղիները, տարհանման միջանկյալ կետերը (ՏՄԿ), նստեցման և իջեցման (ելքի) կետերը

6. Արտաքաղաքային (մերձքաղաքային) գոտում տարահանվողների տեղաբաշխման կարգը և կետերը

7. Շարասյունների պետերը, ավտոշարասյունների ավագները և այլ պաշտոնատար անձինք, որոնք պատասխանատու են տարահանման կազմակերպման համար

8. Տարհանվողների պաշտպանության կազմակերպումը հավաքակետերում, տարհանման երթուղիներում և տեղաբաշխման վայրերում

9. Տարհանվածների առաջնահերթ կենսապահովման կազմակերպումը արտաքաղաքային գոտում

10. Կառավարման և կապի կազմակերպումը տարահանման ընթացքում

Անհրաժեշտությունից ելնելով՝ պլաններում կարող են արտացոլվել նաև այլ հարցեր:

/Տարհանման հանձնաժողովի նախագահ՝ / _Գ.Ասատրյան_/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՈՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Խորոնք, 68689, khorong.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 հունիսի 2016 թվականի N 24

ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 31-ի թիվ 7 նիստի թիվ 1 որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խորոնք համայնքի վարչական սահմաններում գտնվող բնակելի տունը /կոդ՝ 04-050-013-028/ հասցեավորել Ա. Մանուկյան 17:

2.Սույն որոշումը պետական գրանցման համար ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային սպասարկման գրասենյակ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

20 16 թ. հունիսի 02
գ.Խորոնք